



ՌԱԶՄԱԿԱՆ ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բովանդակություն

Ներածություն.....	2
1. «Ռազմական Օմբուդսմեն» հասկացության սահմանումը, նպատակները և ձևավորման մարտահրավերները.....	4
2. Միջազգային փորձի համեմատական վերլուծություն. այլ երկրների փորձը և առանձնահատկությունները.....	6
2.1 Ռազմական օմբուդսմենի ինստիտուտների ստեղծման շարժառիթները.....	6
2.2 Օմբուդսմենի ինստիտուտների մոդելները.....	7
2.3 Ռազմական օմբուդսմենի և ԶՈՒ-ի մարմինների միջև համագործակցության խնդիրները.....	9
2.4 Օմբուդսմենի ինստիտուտների իրավական հիմքերը և անկախությունը	10
2.5 Օմբուդսմենի ինստիտուտի ինստիտուցիոնալ և գործառության անկախությունը.....	11
2.6 Բողոքների քննության տեսակների և վեճերի լուծման առանձնահատկությունները.....	12
3. ՀՀ ԶՈՒ-ի հիմնախնդիրները և ՌՕ-ի ներդրման անհրաժեշտությունը	15
2.1 ՀՀ ԶՈՒ-ի ներքին վերահսկողական մեխանիզմները.....	16
2.2 Զինծառայողների իրավունքների խախտումները որպես համակարգային խնդիրների հետևանք	17
2.3 Մարդու իրավունքների պաշտպանի և դատախազության իրավասությունների շրջանակը ԶՈՒ-ում	19
2.4 Հաշվետվողականություն և թափանցիկություն	21
3. Ռազմական Օմբուդսմենի իրավասությունների հնարավոր շրջանակը ՀՀ-ում	21
3.1 ՀՀ-ում ՌՕ-ի ինստիտուտի ձևավորման նախընտրելի մոդելը	22



Ներածություն

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, (ՀՔԱՎ գրասենյակ) իրականացնելով իրավապաշտպան գործունեություն, մշտապես արձանագրել է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները և կարևորել դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների մշակումը: ՀՔԱՎ գրասենյակը քաղաքացիական վերահսկողության շրջանակներում ամենօրյա գործունեություն է իրականացնում՝ ուղղված զինձառայողների, զինակոչիկների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանությանը, պարբերաբար հանդես գալով զեկույցներով, հայտարարություններով և առաջարկություններով՝ միտված զինված ուժերում տիրող իրավիճակի, ոչ մարտական պայմաններում զինձառայողների մահվան դեպքերի և օրենդրական ոչ բարենսպաստ դաշտի վերաբերյալ խնդիրների լուծմանը:

ՀՔԱՎ գրասենյակը, հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, որդեգրել է մոտեցում, որի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների զարգացումը պետք է ուղեկցվի մասնագիտացված օմբուդսմենների ձևավորմամբ:

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի¹ (Ծրագիր) 115-րդ կետով որպես գործողություն սահմանված էր «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումների համաձայն Ռեզոլուցիայի օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը, որը նախատեսված էր հիմնադրել մինչև 2014 թվականի չորրորդ եռամսյակը, սակայն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 1302-Ն որոշմամբ նշված գործողության կատարման ժամկետը երկարաձգվեց մինչև 2016 թվականի առաջին եռամսյակ:

Դեռևս Մարդու իրավունքների երրորդ պաշտպան Կ. Անդրեասյանի օրոք՝ 2014 թ.-ին մշակված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսվել էր կարգավորում, որի համաձայն՝ Պաշտպանի տեղակալներից մեկը Պաշտպանի հանձնարարությամբ գործունեություն պետք է իրականացնի զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում, և յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում այդ տեղակալը Պաշտպանին պետք է ներկայացնեի զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին զեկույց: Նշենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալներից մեկի մակարդակով զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում գործունեության իրականացումը չի

¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ին ՀՀ կառավարության թիվ 303-Ն որոշմամբ հաստատված ՄԻՊԱՌՄՕ 113-119 գործողություններ, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97193>:



համապատասխանում ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի 9-րդ հոդվածի 9.2 կետին, որն առաջարկում է որպես զինձառայողների իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոց ներդնել ռազմական օմբուդսմենի անկախ քաղաքացիական ինստիտուտը:²

Ինչևէ, նշված նախագիծը Կ. Անդրեասյանի կողմից այդպես էլ ՀՀ կառավարություն չներկայացվեց, քանի որ, ինչպես նշվում է ՀՔԱՎ գրասենյակին ուղղված գրության մեջ. «(...) առանձին դրույթներին տարաբնույթ մեկնաբանություններ տալու արդյունքում խոչընդոտներ են ստեղծվել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության համար»:

2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում պարտադրվեցին ՀՀ Սահմանադրության փոփոխությունները:³ Եվ, որպես հետևանք, ՀՀ Նախագահի 2016թ. փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա հրամանագրով հաստատված Սահմանադրական փոփոխություններով անվանականորեն սահմանված և ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկում ներառվեց նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը (ընդունվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ին), որը ձևավորեց մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մենաշնորհային դիրքը:⁴

Ի պատասխան Ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ՝ ՀՔԱՎ գրասենյակի 2016 թվականի օգոստոսի 6-ի թիվ 412 գրության հարցադրումների՝ Մարդու իրավունքների պաշտպանը հայտնեց, որ ռազմական օմբուդսմենի հիմնադրումը նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով տվյալ ոլորտում տարբեր պետությունների փորձը և միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներն այս հարցի վերաբերյալ: Մարդու իրավունքների պաշտպանը հավելել է, որ 2016 թ. հունիսին Պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է քրեադատավարական և զինձառայողների իրավունքների պաշտպանության վարչություն, որն իրականացնում է զինձառայողների, ինչպես նաև վերջիններիս ընտանիքների անդամների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկում:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նշված դիրքորոշումն ամբողջությամբ հակասում է թե՛ առանձին պետությունների փորձին (Գերմանիա, Հոլանդիա, Կանադա և այլն), թե՛ միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներին՝ ԵԽԽՎ, Ջինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոն:⁵

² Տե՛ս ՀՔԱՎ [առաջարկությունները](#) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

³ Տե՛ս ՀՔԱՎ [գնահատականը](#) ՀՀ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ: Տե՛ս նաև ՀՔԱՎ [գեկույցը](#) պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ:

⁴ Տե՛ս ՀՔԱՎ [գնահատականը](#) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի մասին:

⁵ Տե՛ս [ՀՔԱՎ տեղեկանքը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի իրականացման վերաբերյալ](#), էջ. 148-150:



2016 թվականին հրապարակված ՀՔԱՎ գրասենյակի առաջարկությունը՝ ռազմական օմբուդսմենի ստեղծման անհրաժեշտության մասին, շարունակում է մնալ արդիական⁶, իսկ ՋՈՒ-երում իրավունքների պաշտպանության խնդիրները մինչ օրս կրում են համակարգային բնույթ: Այդ իսկ պատճառով, սույն աշխատությամբ՝ նվիրված Ռազմական օմբուդսմենի ինստիտուցիոնալ կառույցի արդյունավետությանը, ՀՔԱՎ գրասենյակը, կրկին անդրադառնում է առկա խնդիրներին և ներկայացնում առաջարկություն՝ համակարգային փոփոխություններ նախաձեռնելու նպատակով:

1. «Ռազմական Օմբուդսմեն» հասկացության սահմանումը, նպատակները և ձևավորման մարտահրավերները

Զինված ուժերում օմբուդսմենը ռազմական հրամանատարական կազմից անկախ ինստիտուտ է, որը քաղաքացիական վերահսկողություն է իրականացնում պաշտպանական ոլորտի նկատմամբ և աջակցում լավ կառավարման (good governance) սկզբունքների կիրառության երաշխավորմանն ու պահպանմանը:⁷

Որոշ երկրներում զինված ուժերի նկատմամբ նման վերահսկողության գործառույթն ընդգրկված է քաղաքացիական վերահսկողության ավելի լայն մեխանիզմ ունեցող մանդատում (ինչպես օրինակ՝ *մարդու իրավունքների ընդհանուր օմբուդսմենի ինստիտուտը կամ դասական օմբուդսմենը*⁸), որի լիազորությունների մեջ են մտնում հասարակության բոլոր անդամների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (...):⁹ Չնայած օմբուդսմենի ինստիտուտները կարող են տարբեր լիազորություններ և նպատակներ ունենալ՝ միևնույն ժամանակ նրանք ունեն մի շարք ընդհանուր տարրեր և ուղղված են ժողովրդավարության կայունության ապահովմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտպանական ոլորտը համարվում է «փակ համակարգ», որտեղ մարդու իրավունքները ենթարկվում են որոշակի սահմանափակումների, իսկ համակարգի շուրջ իրավահարաբերությունները պարունակում են զաղտնիություն, անհրաժեշտություն է առաջանում ստեղծել զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ: Մյուս կողմից, պետության նեգատիվ պարտավորությունն է զերծ մնալ

⁶ Տե՛ս [ՀՔԱՎ գրասենյակի գնահատականը «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ](#), 3-րդ կետ, էջ 6:

⁷ [Ombuds Institutions for the Armed Forces in Francophone Countries of sub-Saharan Africa](#), published by DCAF, 2015, p. 22.

⁸ «Օմբուդսմեն» տերմինը սովորաբար օգտագործվում է կոնկրետ հաստատության համար, որն ավելի նման է սկզբնական, սկանդինավյան մոդելին: Գոյություն ունեն սկանդինավյան երկու մոդելներ՝ շվեդական/ֆիննական օմբուդսմենի ինստիտուտ, որն իրավասու է դատական գործեր վարելու/դատական հետապնդում սկսելու համար, և դանիական մոդելը, որին ամենահաճախ են կրկնօրինակում մյուս օմբուդսմենի ինստիտուտները: Տե՛ս Benjamin S. Buckland and William McDermott, Ombuds Institutions For The Armed Forces, published by DCAF, 2012, էջ 22:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ. 32-33:



մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումներից, ինչպիսիք են օրինակ՝

- բռնության ենթարկելու դեպքերը, երբ հասցվել են կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ,
- կամայական կալանավորումների պրակտիկան,
- խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումը,
- խտրականությունը՝ պայմանավորված կրոնական, էթնիկ կամ փոքրամասնության պատկանելությամբ,
- մտքի, խղճի, կրոնի կամ հավատքի ազատության սահմանափակումները,
- խոսքի, միավորումների և խաղաղ հավաքների ազատության իրավունքի սահմանափակումներ:

Ռազմական Օմբուդսմենի (ՌՕ) ինստիտուտը զարգացած (առաջադեմ) երկրներում կարևորագույն օղակ է հանդիսանում քաղաքացիական վերահսկողության համակարգում, որի նպատակն է նպաստել պաշտպանության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը, իսկ զարգացող և բարեփոխումներ իրականացնող երկրներում, որտեղ առկա է դատական համակարգի ինստիտուցիոնալ թուլություն և այլ հակակշիռ ստանդարտ մեխանիզմների բացակայություն (օրինակ՝ վեճերի լուծման այլընտրանքային արտադատական մարմիններ) կամ ոչ պատշաճ վարչարարություն, ՌՕ-ի ինստիտուտը հանդիսանում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմ և երաշխիք:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն (այժմ՝ Մարդու իրավունքների խորհուրդ) ընդունել է [2006/64 քանաձևը](#), որում սահմանվում է լավ կառավարման հիմնական հատկանիշները՝

- հաշվետվողականություն,
- թափանցիկություն,
- պատասխանատվություն,
- մասնակցություն,
- արագ արձագանքելու կարողություն (մարդկանց կարիքներին):¹⁰

Օմբուդսմենի ինստիտուտները, լինելով անկախ և անկողմնակալ մարմիններ, լիովին ապահովում են լավ կառավարման չափանիշների գործնական կիրառումը, մասնավորապես՝ մշակելով առաջարկություններ, հրապարակելով թեմատիկ զեկույցներ, իրականացնելով մշտադիտարկում և վերահսկողություն, քննելով բողոքները:

¹⁰ Տե՛ս նաև [Good Governance and Human Rights](#):



Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ՌՕ-ի ինստիտուտի նպատակները և մարտահրավերներն ամփոփվում են *արդյունավետ ժողովրդավարական մեխանիզմի ներդրման, հասարակության և զինված ուժերի միջև վստահության կապի ստեղծման, զինձառայողների իրավունքների պաշտպանության և համակարգային խնդիրների լուծման մեջ*:

2. Միջազգային փորձի համեմատական վերլուծություն. այլ երկրների փորձը և առանձնահատկությունները

2.1 Ռազմական օմբուդսմենի ինստիտուտների ստեղծման շարժառիթները

Միջազգային պրակտիկայում ՌՕ-ի ինստիտուտների ներդրումն ու անհրաժեշտությունը ոչ թե կամայականության, այլ մի շարք շարժառիթների վրա հիմնված պատճառահետևանքային կապի արդյունք է: Առաջին շարժառիթը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քաղաքացիական հասարակության և պաշտպանական ոլորտի միջև առկա հարաբերությունների վերաարժևորումն էր: Երկրորդը՝ զինձառայողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունն էր՝ իրավախախտումների բացահայտման, բողոքների քննության և իրավունքների վերականգնմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների ներդրմամբ (ժողովրդավարական վերահսկողություն): Երրորդ շարժառիթը արդյունավետ կառավարման և համակարգային խնդիրների բարելավմանն ուղղված ինստիտուտացիոնալ կառույցի ստեղծումն էր:

Որոշ երկրներում ՌՕ-ի ինստիտուտներն ստեղծվել են քաղաքացիական հասարակություն-զինված ուժեր հարաբերությունների վերաարժևորման արդյունքում: Գերմանիայում 1956թ.-ին ստեղծված զինված ուժերի հարցերով խորհրդարանական հանձնակատարի մեխանիզմը նպատակ էր հետապնդում ձևավորելու հասարակական վստահություն և ստեղծել ավելի ամուր բանակ. նմանօրինակ մեխանիզմներ ներդրվեցին նաև [Ավստրիայում](#) (1955 թ.) և [Նորվեգիայում](#) (1952 թ.):

Ժողովրդավարական վերահսկողությունն իրենից ենթադրում է արդեն իսկ գոյություն ունեցող ինստիտուտների կատարելագործում կամ զինված ուժերի ոլորտում բողոքների արդյունավետ քննություն իրականացնող անկախ և մասնագիտացված մարմնի ձևավորում, օրինակ՝ [Իռլանդիայում](#), [Միացյալ Թագավորությունում](#) մասնագիտացված պաշտպանի գրասենյակները ներդրվել են՝ քանի որ գոյություն ունեցող «ad hoc» համակարգերի առկայությունը բավարար չէր բողոքների արդյունավետ քննության համար:

Որոշ երկրներում մասնագիտացված մարմնի ստեղծումը պայմանավորված է եղել հասցեական և թիրախային խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, Միացյալ Թագավորությունում զինվորական ծառայության հետ կապված բողոքների



հանձնակատարը ստեղծվել է 2006թ.-ին՝ ռազմական բազայում զինճառայողների մահվան դեպքերի հետ կապված առանձին քննություն սկսելու առաջարկից հետո¹¹, նմանօրինակ պայմաններում է կազմավորվել նաև Կանադայի ազգային անվտանգության և զինված ուժերի հարցերով օմբուդսմենի գրասենյակը (1998թ.-ին):

2.2 Օմբուդսմենի ինստիտուտների մոդելները

Ձինված ուժերում առկա իրավահարաբերությունների կարգավորմանն, իրավախախտումների կանխմանն և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված մեխանիզմների մոդելները ներդրվել են ամբողջ աշխարհում, սակայն դրանց ադապտացումը և ինստիտուցիոնալ գործառույթներն էականորեն տարբեր են՝ կախված պետության կառավարման և կառուցվածքային ձևից, իրավակիրառ փորձից, իրավական մշակույթից և սովորույթներից: Գոյություն ունեն ԹՕ-ի ինստիտուցիոնալ երեք մոդելներ.

- ՁՈւ-ի կազմում օմբուդսմենի ինստիտուտներ (Ավստրալիա, Բելգիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Սլովենիա, ԱՄՆ),
- բացառիկ իրավասությամբ օժտված օմբուդսմենի ինստիտուտներ (Ավստրիա, Բոսնիա և Հերցեգովինա, Կանադա, Գերմանիա, Իռլանդիա, Նորվեգիա, Միացյալ Թագավորություն),
- ընդհանուր իրավասության օմբուդսմենի ինստիտուտներ (Մեքսիկա, Ֆիլիպիններ, Լեհաստան, Շվեդիա, Սերբիա, Սլովենիա, Ավստրալիա):

ՁՈւ-ի կազմում ձևավորված մոդելը, որպես կանոն, **գլխավոր ռազմական տեսչության կամ տեսուչի** ինստիտուտն է (այսուհետ՝ ԳՌՏ), որն իրականացնում է վերահսկողական լիազորություններ: ԳՌՏ-ը և նրա վարչակազմը ՁՈւ-ի ծառայողներ են (բարձր օդակի սպայական կազմ) և հրամանատարության մաս են կազմում: ԳՌՏ-ները, լինելով ՁՈւ-ի ինստիտուցիոնալ օդակի մաս, մասնագիտացված են ոլորտում և լիազորված արդյունավետ ու անհապաղ լուծումներ առաջարկել համակարգային խնդիրներին: Սակայն, հանդիսանալով ՁՈւ-ի կազմի օդակ (որտեղ առկա է զինվորական հիերարխիա), ինստիտուտի նման կարգավիճակի արդյունավետությունը կասկածի տակ է առնվում, քանի որ համակարգի մաս կազմող կառույցը չի կարող իրականացնել անկողմնակալ, անաչառ քննություն, որը կարող է հակասել ՁՈւ-ի շահերին: Այսպիսի մարմիններ գործում են Ֆրանսիայում, Նիդերլանդներում, ԱՄՆ-ում^{12,13}

¹¹ Sté u Benjamin S. Buckland and William McDermott, Ombuds Institutions For The Armed Forces, published by DCAF, 2012, էջ 36:
¹² Ավելի վաղ ԱՄՆ-ում ԳՌՏ-ներն իրականացնում էին նաև մարդու իրավունքների պաշտպանի գործառույթ: Երբ 1777թ.-ին ԳՌՏ-ը ստեղծվեց Կոնգրեսի կողմից, դրա 4 հիմնական գործառույթների թվում էր նաև հրամատարների կողմից զինվորների նկատմամբ արժանապատիվ և արդարացի վերաբերմունքի ապահովումը: Ի սկզբանե, ԳՌՏ-ները թեև գործում էին զինված ուժերի կազմում, սակայն հրամանատարության օդակից անկախ էին: Սակայն 1876թ.-ին պատերազմի հարցերով քարտուղարը կարգադրեց, որ բոլոր տեղական ԳՌՏ-ները զեկուցեն անմիջապես հրամանատարական կազմին և ոչ թե



Մի շարք երկրներում գործում են անկախ օմբուդսմենի ինստիտուտներ, որոնց իրավագործությունը տարածվում է միայն ՁՈւ-ի նկատմամբ: Լինելով ՁՈւ-ից անկախ և անկողմնակալ մարմին՝ ՌՕ-ն լիազորություն ունի քննելու բողոքներ, հրապարակել զեկույցներ, ներկայացնել առաջարկություններ, իրականացնել մշտադիտարկումներ, բարձրացնել ՁՈւ-ի թափանցիկության և հաշվետվողականության աստիճանը: Էական է այն հանգամանքը, որ զինձառայողների և զորակոչիկների շրջանում ՌՕ-ն ճանաչվում է որպես անկախ մարմին, որը հասարակության մեջ ստեղծում է վստահություն՝ խախտված իրավունքների պաշտպանության և վերականգման արդյունավետության հարցում:

Բացառիկ իրավասություն ունեցող ինստիտուտների մոդելներ են՝ Գերմանիայի¹⁴ և Ավստրիայի զինված ուժերի խորհրդարանական հանձնակատարները, Իռլանդիայի ռազմական օմբուդսմենը, Նորվեգիայի զինված ուժերի հարցերով խորհրդարանական գերագույն հանձնակատարը:¹⁵ Նմանատիպ ինստիտուտ ներդրված է նաև Կանադայում՝ ազգային անվտանգության և զինված ուժերի օմբուդսմենը, որը, սակայն, գտնվում է ազգային անվտանգության և զինված ուժերի վարչության կազմում:

Ընդհանուր իրավասության օմբուդսմենի ինստիտուտներն ամենալայն տարածում գտած մեխանիզմներն են, որոնք իրենց լիազորություններն իրականացնում են քաղաքացիական վերահսկողական ինստիտուտների՝ **մարդու իրավունքների պաշտպանի** (հանրային պաշտպան) կամ **դասական օմբուդսմենի** կողմից: Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների շրջանակում է հասարակության բոլոր անդամների իրավունքների պաշտպանությունը՝ այդ թվում նաև ՁՈւ-ի կազմի: Չնայած նրան, որ այս ինստիտուտի հանդեպ ձևավորվել է հանրային մեծ վստահություն և Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակներն ապահովում են արդյունավետ ժողովրդավարական վերահսկողություն, առկա են մի շարք հիմնախնդիրներ ՁՈւ-ում նման ինստիտուտի գործառույթների արդյունավետ իրականացման առջությամբ, օրինակ՝ ռեսուրսների սակավությունը, խորքային և համակարգային խնդիրների բացահայտման դժվարությունները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունների մշակման բացակայությունը, կարճաժամկետ ազդեցությունը և այլն: Նույնիսկ ՄԻՊ-ի համակարգում

իրենց վերադաս ԳՌՏ-ներին: Տե՛ս Բենջամին Ս. Բաքլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Ձինված Ուժերի Օմբուդսմենի Ինստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ. 36:

¹³ ԱՄՆ-ի բանակի գլխավոր ռազմական տեսուչ <https://www.dodig.mil/>

¹⁴ <https://www.bundestag.de/parlament/wehrbeauftragter>

¹⁵ Նորվեգիայի զինված ուժերի հարցերով խորհրդարանական գերագույն հանձնակատարը զինված ուժերի նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավասություն ունեցող ինստիտուտների ամենավաղ օրինակներից մեկն է: Այն հիմնադրվել է 1952թ.-ին՝ խորհրդարանի միաձայն որոշմամբ, և հանդիսանում է զինված ուժերի հարցերով աշխարհում ամենաառաջին խորհրդարանական օմբուդսմենի ինստիտուտը: Հանձնակատարն օմբուդսմենի կոմիտեի նախագահն է, որը կազմված է 7 անդամներից: Հանձնակատարը և օմբուդսմենի կոմիտեն, լինելով Նորվեգիայի խորհրդարանական մարմիններ, ընտրվում են խորհրդարանի կողմից և հաշվետու են խորհրդարանի առջև: Որպես խորհրդարանական ինստիտուտ՝ այն անկողմնակալ է և գործում է պաշտպանության նախարարությունից և ռազմական իշխանություններից անկախ: Հանձնակատարը լիազորված է ապահովելու զինված ուժերի բոլոր գործող և նախկին անդամների/ձառայողների իրավունքների պաշտպանությունը: Տե՛ս Բենջամին Ս. Բաքլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Ձինված Ուժերի Օմբուդսմենի Ինստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ. 38:



առանձին մասնագիտացված ստորաբաժանման կամ տեղակալի ներդրումը չի կարող ապահովել ՁՈւ-երում առկա խնդիրների լուծումը: Նմանատիպ ինստիտուտներ առկա են Ֆիլիպիններում, Շվեդիայում, Նիդերլանդներում, Մերքիայում:

2.3 Ռազմական օմբուդսմենի և ՁՈւ-ի մարմինների միջև համագործակցության խնդիրները

Հաշվի առնելով, որ մի շարք պետություններում առկա են ՁՈւ-ի հարցերով զբաղվելու իրավասություն ունեցող մեկից ավել մեխանիզմներ, անհրաժեշտություն է առաջանում ստեղծել գործուն նախապայմաններ դրանց համահունչ ներդրման, արդյունավետ համագործակցության, ինչպես նաև ընդդատության հարցերի կարգավորման՝ լիազորությունների կրկնությունից խուսափելու կամ նման բնույթի այլ խնդիրները կարգավորելու նպատակով: Այդպես է, օրինակ, Նիդերլանդներում, որտեղ բողոքը սկզբնական փուլում քննվում է ՁՈւ-ի գլխավոր ռազմական տեսուչի կողմից, և դրա մերժման կամ բողոքատուի համաձայնության դեպքում միայն՝ ուղարկվում օմբուդսմենի գրասենյակ:¹⁶

Բոսնիայի և Հերցեգովինայի ՁՈւ-ի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենքով սահմանվում է համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանի հետ՝ մարդու իրավունքների խախտումներ հայտնաբերելիս, ինչպես նաև համագործակցությունն այլ մարմինների՝ պաշտպանության նախարարության, գլխավոր ռազմական տեսուչի, ՁՈւ-ի հետ:¹⁷ Նույն Բոսնիայի և Հերցեգովինայի ՁՈւ-ի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենքի համաձայն՝ նշված հիմնարկները և մարմինները պետք է տեղեկացնեն ՁՈւ-ի խորհրդարանական հանձնակատարին իրենց դիմումի կամ այլ մարմինների պահանջի հիման վրա հարուցված վարույթի, ինչպես նաև վարույթի արդյունքների մասին: Դատական և վարչական մարմինները պարտավոր են ՁՈւ-ի խորհրդարանական հանձնակատարին տեղեկացնել նրա առաջարկով հարուցված դատաքննությունն սկսելու, մեղադրական եզրակացության ներկայացման և դատաքննության արդյունքների մասին: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, դիմումատուի նախնական համաձայնությամբ, կարող է այդ հարցը հասցեագրել ՁՈւ-ի խորհրդարանական հանձնակատարին՝ հետագա գործողությունների համար: ՁՈւ-ի խորհրդարանական հանձնակատարը պարտավոր է տեղեկացնել Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին գործի ընթացքի և առաջընթացի մասին:¹⁸

¹⁶ 2012թ. հուլիսից սկսած Նիդերլանդներում ստեղծվել է հատուկ օմբուդսմենի ինստիտուտ՝ վետերանների համար:

¹⁷ Տե՛ս Բոսնիայի և Հերցեգովինայի օրենք Ռազմական հարցերով խորհրդարանական հանձնակատարի մասին, հոդվածներ 4, 7.1-7.4, <https://www.parlament.ba/data/dokumenti/pdf/31259%20zakon%20o%20parl.%20vojnomo%20povjereniku%20en.pdf>

¹⁸ Տե՛ս նույն տեղում:



Թերևս, համագործակցության հաջողված փորձի լավագույն օրինակ են հանդիսանում Կանադայի երկու՝ իրարից անջատ գործող մեխանիզմները՝ ՋՈւ-ի և [վետերանների հարցերով օմբուդսմենները](#), որոնց միջև աշխատանքը բաժանվում է՝ ըստ բողոքի առարկայի:

2.4 Օմբուդսմենի ինստիտուտների իրավական հիմքերը և անկախությունը

Օմբուդսմենի ինստիտուտների արդյունավետությունն ապահովելու նպատակով պետությունները ձգտում են սահմանադրական կամ օրենսդրական մակարդակով ամրագրել վերջինների գործունեության երաշխիքներ: Սահմանադրական ամրագրմամբ օմբուդսմենի ինստիտուտների օրինակներ են՝ Լեհաստանը, Գերմանիան, Մեքսիկան, Արգենտինան, Ռումինիան: Օրենսդրական կարգավորումների վրա հիմնված օմբուդսմենի ինստիտուտների փորձ առկա է Իռլանդիայում, [Միացյալ Թագավորությունում](#), Բոսնիա և Հերցեգովինայում, Էկվադորում: Այլ սկզբունքով է ստեղծված [Կանադայի ազգային անվտանգության և ՋՈւ-ի հարցերով օմբուդսմենի ինստիտուտը](#), որն ստեղծվել է 1988թ.-ին՝ գործադիր մարմնի որոշմամբ:

Սակայն ՌՕ-ի ձևավորման և ստեղծման վերաբերյալ կարգավորումները չեն սահմանափակվում միայն ներպետական գործիքակազմերի կիրառմամբ: Ընդունված են մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք վերաբերելի են այդ մեխանիզմներին՝

- մարդու իրավունքների ազգային ինստիտուտների համար սահմանած [ՄԱԿ-ի սկզբունքները](#), որոնք սահմանում են այդ ինստիտուտի հիմնադրման և գործողությունների ապահովման չափանիշներ (անկախություն, համապատասխան ռեսուրսներ, ինքնավարություն, պլյուրալիզմ և այլն):
- Բաց հասարակության ինստիտուտի՝ [Տեղեկատվության ազատության իրավունքի և ազգային անվտանգության գլոբալ սկզբունքների նախագիծը](#), որի 5-րդ գլուխը նվիրված է վերահսկողություն իրականացնող մարմինների համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությանը:
- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մարդու իրավունքների պաշտպանների ինստիտուտների վերաբերյալ հանձնարարականը և մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանն և խթանմանն ուղղված ազգային անկախ ինստիտուտների ձևավորմանն ուղղված [առաջարկությունները](#):
- Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման վերաբերյալ [առաջարկությունները](#):
- Օմբուդսմենների միջազգային ասոցացիայի գործունեության [չափանիշները](#)՝ անկախության, անկողմնակալության և չեզոքության, ինչպես նաև գաղտնիության և ձևական պահանջներից զերծ լինելու վերաբերյալ:



2.5 Օմբուղսմենի ինստիտուտի ինստիտուցիոնալ և գործառնության անկախությունը

Օմբուղսմենի ինստիտուտի արդյունավետ և թիրախային գործունեության կարևոր բաղադրիչներից մեկը նրա ինստիտուցիոնալ անկախությունն է, որը ներառում է **ֆինանսավորման կարգը և անդամներին ներկայացվող պաշտոնավարման երաշխիքներ**: Ինստիտուցիոնալ անկախությունն իրենից ենթադրում է անկախություն այլ պետական մարմիններից: Մասնավորապես այն մարմիններից, որոնց հանդեպ օմբուղսմենն իրականացնում է վերահսկողական գործառնություններ, ինչպես նաև ֆինանսաբյուջետային այնպիսի կարգավորում, որը կերաշխավորի օմբուղսմենի ինստիտուտի ֆինանսական անկախությունը: Իռլանդիայի ՌՕ-ը բարձրացրել էր իր ֆինանսական անկախության կարևորությունը, նշելով, որ ցանկալի չէ, որ օմբուղսմենը ստիպված լինի միջոցներ փնտրել իր իրավասության ներքո գտնվող գերատեսչությունից կամ հաստատությունից, ճիշտ չէ, որ օմբուղսմենի գրասենյակի բյուջեն կապված լինի պետական գերատեսչություն հետ, որը կարող է ենթակա լինել բյուջետային կրճատումների, դրանով իսկ անմիջական ազդեցություն ունենալով օմբուղսմենի աշխատանքի արդյունավետության վրա:¹⁹ Բոսնիայի և Հերցեգովինայի ԶՈւ-ի հարցերով խորհրդարանական հանձնակատարը գրասենյակի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորումը ստանում է խորհրդարանից:²⁰ Մեկ այլ օրինակ է Արևելյան Թիմորի «Արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ձևավորելու» մասին օրենքը, համաձայն որի ինստիտուտն «իրավունք չունի դրամական միջոցներ ստանալ այնպիսի հանգամանքներում կամ այնպիսի աղբյուրներից, որոնք կարող են վտանգի տակ դնել նրա անկախությունը և անաչառությունը կամ խոչընդոտել նրա կողմից որևէ քննության իրականացմանը»:²¹ Այդուհանդերձ, մի շարք պետություններում (ինչպես օրինակ՝ Բելգիան, Կանադան, Նիդերլանդները և Միացյալ Թագավորությունը) ՌՕ-ի ինստիտուտը ֆինանսավորվում է այդ պետության պաշտպանության նախարարության բյուջեից:

Ինչ վերաբերում է ՌՕ-ի աշխատակիցներին ներկայացվող պաշտոնավարման երաշխիքներին, ապա պետությունների մեծ մասում սահմանված են հստակ կարգավորված երաշխիքներ: Հիմնականում օմբուղսմենին կարող է պաշտոնանկ անել այն մարմինը, որի կողմից նշանակվել է՝ այն է օրենսդիր մարմինը: Այն պետություններում, որտեղ ՌՕ-ը գտնվում է ԶՈւ-ի կազմում, օմբուղսմենը պաշտոնից հեռացվում է պաշտպանության նախարարի հրամանով:²² Տարբերվող փորձի օրինակներ են՝ Էստոնիան, որտեղ

¹⁹ Տես՝ Հանս Բորնը, Աիդան Ուիլսոն և Բենջամին Ս. Բուրլանդը, Օմբուղսմենի ինստիտուտների համեմատական հեռանկար գինված ուժերի համար, ձեռնարկ 2011թ., էջ 9 <https://www.files.ethz.ch/isn/128693/PP34.pdf>

²⁰ Տես՝ ԲՀ-ի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենք, հոդված 12 <https://www.parlament.ba/data/dokumenti/pdf/31259%20zakon%20o%20parl.%20vojnomo%20povjereniku%20en.pdf>

²¹ Տես՝ Արևելյան Թիմորի «Արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ձևավորելու» մասին օրենքը, հոդված 11.4 <http://ilo.org/dyn/natlex/docs/MONOGRAPH/79903/86119/F25689435/TMP79903.pdf>

²² Տես՝ Հանս Բորնը, Աիդան Ուիլսոն և Բենջամին Ս. Բուրլանդը, Օմբուղսմենի ինստիտուտների համեմատական հեռանկար գինված ուժերի համար, ձեռնարկ 2011թ., էջ 8 <https://www.files.ethz.ch/isn/128693/PP34.pdf>



արդարադատության կանցլերին պաշտոնից կարող է պաշտոնանկ անել միայն դատարանը: Միացյալ Թագավորությունում, ինչպես բոլոր հանրային պաշտոնյաները, հանրային ծառայության բողոքների հարցերով հանձնակատարը պաշտոնից կարող է ազատվել միայն որևէ սկզբունք խախտելու (Նոլանի սկզբունքներ)²³ կամ մասնագիտական գործունեության սկզբունքների խախտումների դեպքում. հանձնակատարը չի կարող հեռացվել պաշտոնից, օրենքով սահմանված իր պարտականությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:²⁴

Գործառնական կամ գործառությանին անկախությունը ևս կարևոր հատկանիշ է, որն ապահովում է ինստիտուտին հասցեագրված խնդիրների և նպատակների անկախ իրականացումը²⁵՝ առանց այլ մարմինների միջամտության: Այնուամենայնիվ, տեսական-օրենսդրական դաշտում այս կամ այլ կերպ սահմանված են սահմանափակումներ, որոնք հազվադեպ են իրագործվում, այն էլ հրապարակային գրավոր ծանուցման, ինչպես նաև խիստ ու ծանրակշիռ հիմքերի պայմաններում: Մասնավորապես, մի շարք պետություններում²⁶ օրենսդրորեն սահմանված է միայն անհատական բողոքների հիման վրա քննության հնարավորություն, ինչն էականորեն նվազեցնում է ինստիտուտների կողմից սեփական նախաձեռնությամբ համակարգային խնդիրների բացահայտումը: Որոշ պետություններում օմբուդսմենի կողմից իրականացվող քննությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել, ինչը հանգեցնում է նրա գործառությանին անկախության սահմանափակմանը:²⁷ Նման կարգավորումների առկայությունը չի կարող նպաստել օմբուդսմենի ինստիտուտի կողմից ռազմավարական նպատակներին հասնելուն և նրա անկախության պահպանմանը:

2.6 Բողոքների քննության տեսակների և վեճերի լուծման առանձնահատկությունները

ՌՕ-ի ինստիտուտի հիմնական և թիրախային խումբը՝ ՁՈՒ-ի կազմի անդամներն են, որոնց ներկայացրած բողոքների հիման վրա օմբուդսմենն իրականացնում է իր լիազորությունները: Սակայն որոշ երկրներում բողոք բերելու իրավասությունը չի

²³ <https://www.isi.net/about/governance-and-management/the-nolan-principles>

²⁴ Տե՛ս Բենջամին Ս. Բաքլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Ձինված Ուժերի Օմբուդսմենի Բնաստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ. 51: Տե՛ս նաև «Հանրային ծառայության բողոքների հարցերով հանձնակատարի մասին» ակտ, հոդված 1 կետ 3 <http://www.legislation.gov.uk/ukpga/1967/13>

²⁵ Որոշել, թե որ տեսակի գործերի քննությունն է առաջնահերթ և որ գործերի վերաբերյալ պետք է վերջնական որոշում կայացնել, պահանջել և ստանալ իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում՝ դասակարգված և այլ գաղտնի համարվող տեղեկատվությունը, որոշել աշխատանքների իրականացման եղանակը, վարձել արտաքին փորձագետների, հանդես գալ անմիջապես մամուլին և հանրությանն ուղղված հայտարարություններով, հրապարակել գրաքննության չենթարկվող զեկույցներ և առաջարկություններ: Տե՛ս՝ Բենջամին Ս. Բաքլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Ձինված Ուժերի Օմբուդսմենի Բնաստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ. 52-53:

²⁶ Բելգիա, Իռլանդիա, Միացյալ Թագավորություն ՁՈՒ-ի հարցերով ինստիտուտներ:

²⁷ Գերմանիա Բունդեսբանդի պաշտպանության հանձնաժողով, Նիդերլանդներ՝ ՌՕ-ի քննության դադարեցում ՊՆ-ի կողմից, Բելգիա՝ Դատական իշխանության կողմից:



սահմանափակվում միայն ՁՈւ-ի կազմի անդամներով (սպայական կազմ և գորակոչիկներ), բողոքներ ընդունվում են նաև որոշակի խումբ անձանցից՝

- ՁՈւ-ի նախկին (և գործող) զինծառայողներ,
- զինծառայողների հարազատներ և ընկերներ,
- զինվորական իրավախախտումներից տուժած քաղաքացիներ
- այլ պետությունում գտնվող ռազմաբազայի ՁՈւ-ի քաղաքացիական ծառայողներ:²⁸

Իռլանդիայում թե՛ գործող և թե՛ նախկին զինծառայողներն իրավունք ունեն բողոք ներկայացնելու ինչպես իրենց, այնպես էլ իրենց գործող կամ նախկին զինծառայող գործընկերոջ կամ քաղաքացիական ծառայողի անունից²⁹, իսկ Կանադայում այդ շրջանակի մեջ ներառվում են նաև կուրսանտները, պայմանագրային ծառայողները, ՁՈւ-ի դիմորդները, ոչ պետական ֆոնդի և ազգային անվտանգության նախարարության աշխատողները:³⁰ Ալբանիայում և Ռումինիայում բողոք բերելու իրավունք ունեն նաև հասարակական կազմակերպությունները, տնտեսական կամ այլ ընկերությունները:³¹

Սակայն ՌՕ-ի լիազորությունների ծավալը չի սահմանափակվում միայն բողոքների քննությամբ: Օմբուդսմենին տրված է անարգել այցերի (մշտադիտարկում) և սեփական նախաձեռնությամբ քննություն սկսելու իրավասություն: Սեփական նախաձեռնությամբ իրականացվող քննություններն ամենատարածված և արդյունավետ գործիքակազմն են, որ տրված է օմբուդսմենի ինստիտուտներին: Օրինակ, Գերմանիայի ՁՈւ-ի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենքում նշվում է, որ հանձնակատարը սեփական նախաձեռնությամբ քննություն է սկսում, եթե հայտնաբերվել է զինծառայողների իրավունքների կամ ներքին ղեկավարության Innere Führung³² սկզբունքի խախտում:³³ Այնուամենայնիվ, օմբուդսմենի ինստիտուտների մանդատն ամենազոր չէ և, բնականաբար, սահմանված են նյութական ու բովանդակային հիմքով սահմանափակումներ: Դրանք

²⁸ Տես՝ Բենջամին Ս. Բաբլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Չինված Ուժերի Օմբուդսմենի Ինստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ 62. աղյուսակ 6ա https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/OMBUDSHbook_FINAL_ONLINE.pdf

²⁹ Տես՝ [Իռլանդիայի ՌՕ-ի մասին ակտ](#), հոդված 6:

³⁰ Տես՝ [Կանադայի ազգային անվտանգության և զինված ուժերի հարցերով օմբուդսմենի գրասենյակի մասին նախարարական հրահանգներ](#), բողոքելու իրավունքը:

³¹ Տես՝ [Ալբանիայի Հանրապետության ժողովրդական փաստաբանի մասին օրենք](#), հոդված 12 և Ռումինիայի ժողովրդի փաստաբանի ինստիտուտի կայք-էջի ուղեցույց: http://www.avp.ro/index.php?option=com_content&view=article&id=66&Itemid=180&lang=ro-ro#1

³² Գերմանիայի զինված ուժերում Innere Führung հայեցակարգն առաջնորդման և միմյանց հետ փոխգործակցության առաջնորդող սկզբունք է: Innere Führung հավելվածի նպատակը գործող զինված ուժերի գործառնական պայմանների համադրումն է ժողովրդավարական սահմանադրական պետության ազատական սկզբունքներին: Հատկանշական է, որ դեռևս 1947-ին, Innere Führung- ի հայրերից մեկը՝ ապագա գեներալ-լեյտենանտ Վոլֆ Գրաֆ ֆոն Բաուդիսինը, գրել է, որ գերմանական հավանական նոր զինված ուժերը պետք է իրենց ներկայացնեն, որպես «կազմակերպություն, որը ծառայում է մարդկությանը, ճանաչում է իր առաջնահերթությունը, ինչպես նաև հնարավորություն է տալիս դրան զարգացում»:

³³ Տես՝ Բենջամին Ս. Բաբլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Չինված Ուժերի Օմբուդսմենի Ինստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ 98 նաև, Չինված ուժերի խորհրդարանական հանձնակատար, Չինծառայողների հիմնական իրավունքները պաշտպանելը և զինված ուժերի նկատմամբ վերահսկողությունը, էջ 23, հասանելի է՝ <https://www.btg-bestellservice.de/pdf/80150000.pdf>



ներառում են վաղեմության ժամկետները³⁴, համակարգային խնդիրների լուծմանն ուղղված լիազորությունների շրջանակը, քրեական գործերով միջամտելու արգելքը և այլն: Օմբուդսմենի ինստիտուտները կարող են նաև հրաժարվել քննելու այն բողոքները, որոնք անհիմն են, պատրաստված են անբարեխիղճ, եթե գործողությունը որևէ կարևորություն չի ներկայացնում, եթե դիմումատուն այն անձը չէ, ում իրավունքները խախտվել են, կամ չունի բավարար անձնական շահ, կամ վնասներն արդեն փոխհատուցվել են: Մասնավորապես, արգելվում է անանուն դիմումների ներկայացումը. նմանատիպ բողոքները քննության չեն առնվում³⁵, սակայն որոշ պետություններ այդ կանոնից նախատեսում են բացառություններ:³⁶ Այն պետություններում, որտեղ չի թույլատրվում ուղարկել անանուն բողոքներ, օմբուդսմենը կարող է համեմատել կոնկրետ խնդրի շուրջ ստացած բողոքների քանակն անանուն հարցումներից ստացված տվյալների հետ՝ համոզվելու համար, որ անանուն բողոքների մասին արգելք չի խանգարում, որ մարդիկ դիմեն օմբուդսմենին: Այս մոտեցումը կիրառվում է, օրինակ, Միացյալ Թագավորության ծառայության բողոքների գծով հանձնակատարի կողմից, ով յուրաքանչյուր տարի անցկացնում է համեմատություն՝ բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ զինված ուժերի նկատմամբ կարծիքի վերաբերյալ հարցման արդյունքների հետ:³⁷

Բոլոր օմբուդսմեններն իրավասու են կատարելու քննություն, որը, բնականաբար, չի նույնացվում դատախազական կամ քննչական մարմինների կողմից իրականացվող գործառնությունների հետ, և նպատակ է հետապնդում արձանագրել խնդիրները հրապարակվող զեկույցներում և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Քննություն իրականացնելու ընթացակարգը կարող է տարբեր պետություններում տարբեր լինել, սակայն որոշ հիմնաքարային բաղադրիչներ նույնական են օմբուդսմենի ինստիտուտների համար: Մասնավորապես՝ **փաստերի հավաքագրումը, բողոքի հիմնավոր լինելու մասին որոշման ընդունումը, վեճերի այլընտրանքային լուծումը, հարցազրույցների և քննության այլ տեսակների անցկացումը, եզրակացության տրամադրումը և դրա հիման վրա առաջարկությունների մշակումը:**³⁸ Քննության իրականացման բարդ և ժամանակատար փուլերն են՝ հարցազրույցների իրականացումը և գորամաս ստուգայցերը: Օմբուդսմենի ինստիտուտը կազմում է հարցազրույցի մասնակիցների ցանկը, օրինակ՝ վկաներ, տուժող,

³⁴Տե՛ս Հանս Բորն, Կիմ Պիագետ և Ռիինա Տուրտին, ԵԱԶԿ տարածաշրջանի զինված ուժերի օմբուդսմենի ինստիտուտների ուսումնասիրություն, ձեռնարկ, 2015թ., էջ 26, աղյուսակ 5

³⁵Տե՛ս Ալբանիայի Հանրապետության ժողովրդական փաստաբանի մասին օրենք, հոդված 15 և ԲՀ-ի խորհրդարանական հանձնակատարի մասին օրենք, հոդված 8.2:

³⁶ Տե՛ս Մեքսիկայի քաղաքացիների պաշտպանի մասին օրենք, հոդված 25

³⁷Տե՛ս Բենջամին Ս. Բաքլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Չինված Ուժերի Օմբուդսմենի Ինստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ 61 https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/27067/mod_ara1011.pdf & Պաշտպանության նախարարության տարեկան հաշվետվությունը և հաշիվները 2010-11թթ, կետ 6.32 https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/OMBUDSHbook_FINAL_ONLINE.pdf

³⁸ Տե՛ս Իռլանդիայի ՌՕ-ի ակտ, հոդված 8, <http://www.irishstatutebook.ie/eli/2004/act/36/section/8/enacted/en/html#sec8> և Բենջամին Ս. Բաքլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Չինված Ուժերի Օմբուդսմենի Ինստիտուտները, ձեռնարկ, 2012թ., էջ 101, աղյուսակ 9 ա , Իռլանդիայի փորձը



փորձագետներ և այլ անձինք: Կարևորվում է նաև հարցազրույցի անցկացման կարգը՝ կախված տուժողի հոգեբանական վիճակից, ճնշվածության փաստից: Սակայն հարցազրույցից որոշ անձինք կարող են չարամտորեն կամ այլ հանգամանքների բերումով հրաժարվել կամ խուսափել: Այդ պատճառով օմբուդսմենի մի շարք ինստիտուտներին տրվել է լիազորություն դատական ծանուցագիր ուղարկելու, ինչը հնարավորություն է տալիս պարտադրելու անձին վկայություն տալ:³⁹ Հարցազրույցներից խուսափելու հիմնական պատճառը հանդիսանում է վախը վրեժխնդրության հանդեպ, որը պետք է փարատվի համապատասխան միջոցառումների իրականացմամբ:⁴⁰

3. ՀՀ ՁՈւ-ի հիմնախնդիրները և ՌՕ-ի ներդրման անհրաժեշտությունը

Ցանկացած պետության կայունության ու անվտանգության պահպանման հիմնական և կարևորագույն բաղադրատարրն են հանդիսանում զինված ուժերը, որոնց նպատակն է ապահովել քաղաքացիների անվտանգությունը, պետության տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիության պաշտպանությունը: ՀՀ ՁՈւ-երը, հանդիսանալով «երիտասարդ» կառույց, դեռևս լիովին չի արտացոլում արդյունավետ կառավարման և ժողովրդավարության հիմնարար սկզբունքների իրացվելիությունը համակարգի ներսում: Որոշ խնդիրներ, որոնք ինստիտուցիոնալ առումով արդյունավետ չեն կամ դադարել են ապահովել կենսունակություն, արդյունք են նախկին խորհրդային մեխանիզմների ժառանգման կամ արդիական չեն (համահունչ չեն արձագանքում կամ չունեն համապատասխան գործիքակազմ): ՁՈւ-ի կազմավորումից ի վեր, արձանագրվել են մի շարք մտահոգիչ խնդիրներ, մասնավորապես՝

- ներքին վերահսկողական մեխանիզմների հանդեպ խորը անվստահություն,
- արտաքին ինստիտուցիոնալ կառույցների անկենսունակություն կամ ոչ բավարար ներգործություն,
- զինձառայողների իրավունքների խախտում, ինչպես նաև համակարգային խնդիրներ,
- հաշվետվողականության և թափանցիկության բացակայություն:

³⁹ Տե՛ս ՄԱԿ-ի զարգացման ծրագիր «Ուղեցույց օմբուդսմենի ինստիտուտների համար ինչպե՞ս իրականացնել քննություններ», էջ 80:

⁴⁰ Դատական ծանուցագրի լիազորություններով օժտված օմբուդսմենի ինստիտուտների օրինակներ են՝ Ավստրիա, Գերմանիա, Նորվեգիա, Սերբիա, Սլովենիա
<https://uscode.house.gov/view.xhtml?path=/prelim@title5/title5a/node20&edition=prelim>

2.1 ՀՀ ԶՈՒ-ի ներքին վերահսկողական մեխանիզմները

ՀՀ ԶՈՒ-ի ներքին վերահսկողական մարմիններն են՝

1. **Ռազմական ոստիկանությունը.** ապահովում է զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների նախականիտումը, կանխումը և խափանումը:⁴¹
2. **Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն),** որի լիազորությունների շրջանակի մեջ է մտնում պաշտպանության նախարարության թեժ գծի գործունեության սպասարկումը, զինված ուժերում մարդու իրավունքների և բարեվարքության վիճակի մասին հետազոտությունների և առաջարկությունների մշակման իրականացումը, մեղաբարանական ուղեցույցների մշակումը, մշտադիտարկում իրականացնելը և դրա արդյունքում ծրագրերի և օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված գործառույթների իրականացումը:⁴²
3. **Ռազմական վերահսկողության ծառայությունը,** որի նպատակն է՝ զինված ուժերում և այլ զորքերում, մարմիններում և կազմակերպություններում երկրի ռազմական անվտանգության ամրապնդմանն ուղղված բարեփոխումների անցկացման նպաստելը, խաղաղից պատերազմական ժամանակի գործելակարգին անցնելու պլանների (ծրագրերի) իրատեսության, պատրաստականության ուսումնասիրումը և գնահատումը, երկրի տարածքը պատերազմական գործողություններին նախապատրաստելու գործընթացի ստուգումը, զինված ուժերի և այլ զորքերի մարտական և զորահավաքային պատրաստականության ստուգումը:⁴³

Թերևս, վերջին երկու կառուցվածքային ստորաբաժանումները ստեղծվել են ավելի ուշ, քան ռազմական ոստիկանությունը:⁴⁴ Ինչ վերաբերում է ռազմական վերահսկողության ծառայությանը՝ այն նախկինում գործում էր ՀՀ նախագահի աշխատակազմում՝ որպես առանձին ստորաբաժանում՝ գլխավոր ռազմական տեսչություն (ԳՌՏ):⁴⁵

Միջազգային փորձի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ այն մեխանիզմները, որոնք գտնվում են ԶՈՒ-ի ենթակայության ներքո և հրամանատարության մաս են կազմում, չեն կարող ապահովել անկողմնակալություն և կաշկանդված են իրենց լիազորություններով: Կառույցների կողմից ներդրված չի նաև բողոքների ներկայացման այնպիսի կարգ, որը թույլ կտա զինծառայողին, առանց հետագա հետապնդումների և

⁴¹ Տե՛ս «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120611>

⁴² Տե՛ս [Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջ](#), Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեության մասին:

⁴³ Տե՛ս [ՀՀ նախագահի կարգադրությունը](#) ԳՌՏ կանոնադրությանը հաստատելու մասին, 2-րդ և 3-րդ մասեր:

⁴⁴ Տե՛ս [Վարչապետի որոշում](#) ՀՀ ՊՆ կանոնադրությունը հաստատելու մասին, 2-րդ կետ, 4-րդ մաս:

⁴⁵ Տե՛ս [ՀՀ նախագահի կարգադրությունը](#)՝ ՀՀ նախագահի գլխավոր ռազմական տեսչության մասին:

ճնշումների ենթարկվելու վտանգի, ներկայացնել բողոք⁴⁶, մասնավորապես՝ ռազմական վերահսկողական ծառայության գործառնություններում նմանատիպ կարգավորում ամրագրված չէ, ինչն էականորեն նվազեցնում է այս կառույցի գործունեության արդյունավետությունը: Ջինձառայողների շրջանում ռազմական ոստիկանության հանդեպ առկա է վախի և անվստահության մթնոլորտ, որի պատճառներն ակներև արտացոլված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ ընդդեմ ՀՀ-ի մի շարք որոշումներում, որոնցում արձանագրվել են զինձառայողների իրավունքների կոպտագույն խախտումները⁴⁷ ռազմական ոստիկանության կողմից: Գործերում առկա բազմաթիվ դրվագներով ոստիկանները ծեծի են ենթարկել զինձառայողներին, դրսևորել են անմարդկային դաժան վերաբերմունք կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ են կատարել: Մտահոգիչ է նաև ռազմական ոստիկանության կողմից իրականացվող հսկողության պարբերականության աստիճանը, քանի որ կառույցի արձագանքը խնդիրներին կրում է տևական բնույթ, կամ հետևում է արդեն իսկ իրականացված խախտումներից հետո միայն:⁴⁸

2.2 Ջինձառայողների իրավունքների խախտումները որպես համակարգային խնդիրների հետևանք

Պաշտպանական ոլորտն իր առանձնահատուկ առաքելությունների իրականացման ընթացքում և նպատակով առնչվում է բազմաթիվ իրավահարաբերությունների համախմբի, ինչպիսիք են՝ աշխատանքային, առողջապահական, սոցիալ-տնտեսական, դեղիկտային (պատասխանատվություն՝ նյութական վնաս պատճառելու համար) և այլն: Նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ իրավահարաբերությունների մաս կազմող՝ ՀՀ-ի և օտարերկրյա քաղաքացիների, տնտեսվարող սուբյեկտների, ինստիտուցիոնալ կառույցների, զինձառայողների (ժամկետային անձնակազմ, պայմանագրային կազմ, վետերաններ, սպաներ) իրավունքները կարող են խախտվել կամ ենթարկվել սահմանափակումների, անհրաժեշտություն է առաջանում ՀՀ ԶՈւ-ում առկա խնդիրները դասակարգել երկու խմբի՝

1. զինձառայողների «համազգեստով քաղաքացիների»⁴⁹ իրավունքների խախտումներ՝
 - 1.1. կյանքի իրավունք,
 - 1.2. հավասարության իրավունք և խտրականության արգելում,

⁴⁶Տես՝ Բենջամին Ս. Բաքլենդ և Ուիլիամ Մակդերմոտ, Ջինված Ուժերի Օմբուդսմենի Ինստիտուտները, ձեռնարկ, 2012թ., աղյուսակ 9Ե, որտեղ ԱՄՆ գլխավոր ռազմական տեսուչը արտահայտել է կարծիք առ այն, որ գորամասեր այցերի ժամանակ հարակավոր է տեղակայվել այնպիսի վայրում, որտեղ զինձառայողների մեծ շարժ կա՝ ճաշարան, հանգստյան գոտիներ, սրճարան: Այս կերպ հնարավոր կլինի շփվել նրանց հետ՝ առանց ավելորդ ուշադրություն գրավելու և սպառնալիք բողոքների գաղտնիությունը ու հետագա ճնշումների առկայությունը:

⁴⁷Տես [Չայլանն և այլք ընդդեմ Հայաստանի](#), [Հարությունյանն ընդդեմ Հայաստանի](#), [Միրզոյանն ընդդեմ Հայաստանի](#) ՄԻԵԴ վճիռները:

⁴⁸ Ջինձառայողի ինքնասպանության դեպքը հանրության կողմից հնչեղություն ստանալուց հետո ՊՆ-ի հրամանով ՌՌ-ը կատարել է այցեր ստորաբաժանումներ և հայտնաբերել բազմաթիվ խախտումներ <http://mil.am/hy/news/7436>

⁴⁹ «Որպես» համազգեստով քաղաքացիներ » զինված ուժերի անձնակազմը, լինեն նրանք ժամկետային զինձառայողներ կամ կամավորներ, իրավունք ունեն նույն մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ինչպես ցանկացած այլ քաղաքացի», Տես՝ ԵԽ խորհրդարանական վեհաժողովի առաջարկություն 1742 (2006) <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17424>

- 1.3. խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելք,
- 1.4. մտքի, խղճի, կրոնի կամ հավատքի ազատության իրավունք,
- 1.5. խոսքի, միավորումների և խաղաղ հավաքների ազատության իրավունք,
2. համակարգային խնդիրներ՝
 - 2.1. կոռուպցիոն դրսևորումներ,
 - 2.2. քրեական բարքեր և կանոնազրբային հարաբերությունների խախտումներ,
 - 2.3. վերահսկողական մարմինների թերացումներ,
 - 2.4. ռազմավարարական ծրագրերի նորացման անհրաժեշտություն:

ՀՀ-ի և ԱՀ/ԼՂՀ-ի զինված ուժերում 1994թ.-ից ի վեր՝ պաշտոնապես արձանագրվել է մահվան 1134 դեպք, որից միայն 318-ն (27%) են հրադադարի խախտման արդյունք:⁵⁰ Մտահոգիչ վիճակագրությունն արդյունք է զինվորների կողմից կանոնադրային հարաբերությունների խախտման, սպաների կողմից զինձառայողների նվաստացման, ծեծի և այլ ոչ իրավաչափ գործոնների, որոնք մնում են չլուծված ՋՈՒ-երում: ՄԻԵԴ-ի ձևավորված նախադեպային իրավունքը նախատեսում է, որ «ինչպես արգելանքի տակ գտնվող անձանց դեպքում, գորակոչիկները նույնպես գտնվում են պետության հսկողության ներքո, և բացառապես իշխանություններն են ամբողջությամբ կամ մեծ մասամբ տեղյակ բանակում տեղի ունեցող դեպքերից: Այդ պատճառով պետությունը նաև պարտավոր է ներկայացնել բավարար և համոզիչ բացատրություն բանակում զինձառայողի ստացած վնասվածքների կամ վրա հասած մահվան վերաբերյալ⁵¹», այս մոտեցումը արտացոլվել է նաև Մուրադյանն ընդդեմ Հայաստանի գործով⁵², որում ՄԻԵԴ-ը արտահայտել է կարծիք, որ իշխանությունների կողմից չի իրականացվում արդյունավետ քննություն:

ՀՀ ՋՈՒ-ում մարդու իրավունքների իրավիճակի հիմնախնդիրներին անդրադարձ է կատարել նաև **Եվրոպայի խորհրդի (ԵԽ) մարդու իրավունքների հանձնակատարը՝ 2011թ.-ի հունվարի 18-21-ը Հայաստան կատարած այցից հետո**: Մասնավորապես՝ «Հանձնակատարը մտահոգություն է հայտնել հայկական բանակում ոչ մարտական իրավիճակներում մահվան, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերով: Նա Հայաստանի իշխանություններին կոչ է արել լիարժեքորեն ի գիտություն ընդունել այդ երևույթի գոյության փաստը և անհապաղ ու արդյունավետ քննության միջոցով լրացուցիչ ջանքեր գործադրել՝ մեղավորների և պատասխանատու հրամանատարների անպատժելիությանը վերջ դնելու ուղղությամբ: Հանձնակատարի կարծիքով անհրաժեշտ է, որ երկրի բարձրագույն ղեկավարությունը հաստատուն և ուժեղ քաղաքական կամք դրսևորի բոլոր այն գործելակերպերը վերացնելու հարցում, որոնք ոչ միայն խախտում են մարդու

⁵⁰ Տե՛ս սպանության ինֆորմացիա 1994-2020 <https://safesoldiers.am/en/5042.html>

⁵¹ Տե՛ս Բեքերն ընդդեմ Թուրքիայի [Beker v. Turkey], թիվ 27866/03 կետ 41 և 42 <https://hudoc.echr.coe.int/eng-press#%22itemid%22:%22003-2682309-2927221%22>]

⁵² Տե՛ս՝ Մուրադյանն ընդդեմ Հայաստանի վճիռ, 137-152 կետեր:

իրավունքները, այլև վարկաբեկում բանակր: Հանձնակատարը հասկանում է, որ բռնությունից տուժած գորակոչիկներն ու սպաները վախենում են դրանց մասին հաղորդում ներկայացնել և խիստ հազվադեպ են օգտվում բողոքարկման անկախ մեխանիզմներից, ինչպիսիք են Մարդու իրավունքների պաշտպանը և դատարանները: Հանձնակատարը կոչ է անում Հայաստանի իշխանություններին և զինվորական ղեկավարությանն ապահովել բողոքարկման անկախ մեխանիզմների (որոնք դուրս են բանակի հիերարխիայից և կառույցներից) մատչելիությունն առանց որևէ խոչընդոտի՝ չվախենալով բողոք ներկայացնողների նկատմամբ վրեժխնդրությունից»⁵³: Սակայն բանակում մինչև այսօր զինձառայողների իրավունքները շարունակում են կոպտագույն կերպով խախտվել⁵⁴, ինչը ենթադրում է նոր մոտեցումների որդեգրման անհրաժեշտություն և իրավակիրառ պրակտիկայի անհետաձգելի բարելավում:

2.3 Մարդու իրավունքների պաշտպանի և դատախազության իրավասությունների շրջանակը ՁՈւ-ում

2016 թվականից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) աշխատակազմում ստեղծվել է քրեադատավարական և զինձառայողների իրավունքների պաշտպանության մասնագիտացված դեպարտամենտ, իսկ 2017 թվականին հիմնվել է զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, որը ստորաբաժանում է քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում:⁵⁵

Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների շրջանակում է հասարակության բոլոր անդամների իրավունքների պաշտպանությունը՝ այդ թվում նաև ՁՈւ-ի կազմի, սակայն իրավունքների խախտումները հետևանքն են համակարգային մի շարք խնդիրների, որոնց նկատմամբ ՄԻՊ-ը չի իրականացնում պատշաճ վերահսկողություն՝ ելնելով ռեսուրսային և կադրային սահմանափակումներից, այդ ոլորտի նկատմամբ լիազորությունների նեղ շրջանակից, ինչպես նաև իր մանդատի ընդհանրական աստիճանից (թույլ չտալով կենտրոնանալ բացառապես ՁՈւ-ում առկա հիմնախնդիրների լուծմանը): Տարակուսելի է այն հանգամանքը, որ ՀՀ-ը, լինելով ամենախիստ ռազմականացված երրորդ երկիրն աշխարհում,⁵⁶ ներդրել է ընդհանուր իրավասության օմբուդսմենի ինստիտուտ և դեռևս թե՛ ՄԻՊ-ի, թե՛ պետության կողմից քայլեր չեն արվում ՌՕ-ի ինստիտուտի ստեղծման համար՝ չնայած, որ բանակում խնդիրների, հանցագործությունների (մասնավորապես՝

⁵³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համբերգի զեկույցը՝ կետ 137 և 138 <https://www.justice.gov/sites/default/files/eoir/legacy/2013/12/03/report%20by%20thomas%20hammarberg.pdf>

⁵⁴ Տե՛ս ՀՀ ՄԻՊ 2018թ.-ի տարեկան զեկույց, գլուխ 8, 2-րդ ենթագլուխ http://www.parliament.am/draft_docs/7/082_haghordum.pdf

⁵⁵ Տե՛ս ՄԻՊ կառուցվածք <https://www.ombuds.am/site/AboutTeamStructure>

⁵⁶ <https://www.bicc.de/de/press/press-releases/press/news/bicc-global-militarisation-index-2019-top-10-remain-unchanged-634/>



մահվան ելքով) թիվն էականորեն չի նվազում^{57,58} Մասնավորապես՝ ՄԻՊ-ի դիրքորոշումը ՌՕ-ի ստեղծման հարցում բացասական է. «արտահայտելով կարծիք, որ չի կարող ստեղծվել նույն իրավասություններով մարմին, Հայաստանի վերաբերյալ կան զեկույցներ, որոնցում նպատակահարմար չի դիտվում ստեղծել այլ հարցերով օմբուդսմենների գրասենյակներ և այդպիսի մեխանիզմի ներդրումը կրուլացնի ՄԻՊ-ի կառույցը⁵⁹», սակայն նման մոտեցումը չունի որևէ իրավական հիմնավորում և միայն արհեստական խոչընդոտ է առաջացնում նոր օմբուդսմենի ինստիտուտների ներդրման համար:⁶⁰

ՀՀ դատախազության համակարգի կառուցվածքային մաս է կազմում զինվորական դատախազությունը, որը «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարուցում է քրեական հետապնդում, իրականացնում հսկողություն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, բողոքարկում դատարանի վճիռները, որոշումները, դատավճիռները, իրականացնում պետական շահերի պաշտպանություն:⁶¹ Թերևս, երկար տարիներ ռազմական դատախազության կողմից ոչ պատշաճ են իրականացվել իրեն վերապահված լիազորությունները, ինչի հետևանք է դեռևս չբացահայտված և անհասկանալի հանգամանքներում մահացած զինվորների քրեական գործերը, որոնք կասեցվել են և անհետևողականության արդյունքում գործնականորեն անհնար է դարձել դրանց բացահայտումը: Չնայած դատախազության կողմից բարձրացել է ԶՈւ-ում հանցագործությունների դեմ դատախազական հսկողության իրականացումը, պետական շահերի պաշտպանության իրականացումը և կոռուպցիայի դեմ պայքարը՝ դեռևս ակներև չեն նախկին դատախազական ապօրինի գործունեության բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք գոյություն ունեն մինչ այսօր^{62,63}

⁵⁷ Տե՛ս ՀՔԱՎ Տեղեկանք 2018, 2019, 2020թթ. ԶՈւ-երում մահացության դեպքերի մասին
https://drive.google.com/file/d/1ERe3tbMQ_6ReJGReOyZWszramBP7oBJx/view,<https://drive.google.com/file/d/11XrrrZXYTuB6pkxKFAB6sQlsQ5HU9iuv/view>, https://drive.google.com/file/d/1OufOq_RFjbduUMHQSK3J3LqdtBffXNfY/view

⁵⁸ <https://www.azatutyun.am/a/30416688.html>

⁵⁹ https://hetq.am/hy/article/118076?fbclid=IwAR1LpHSUQvIkDCNvwCHzw6TsFYYfeISwHK1yL8R_at1IITIo2msftwm1ugw

⁶⁰ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի կարծիք 866/2016 ՄԻՊ-ի սահմանադրական օրենքի նախագծի մասին, գլուխ 4. Պաշտպանի իրավասության ներքո գտնվող հարցերի քննարկման կարգը, կետ 48 «որտեղ խոսքը գնում է խթանել անկախ մարմնի կողմից զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը և զինճառայողների բողոքների քննումը», այնուամենայնիվ, ՄԻՊ-ի կողմից սա չի կարող դիտվել մենաշնորհ և տարաբնույթ մեկնաբանություններով խոչընդոտել ՌՕ-ի ստեղծմանը:
[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)033-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)033-e)

⁶¹ Տե՛ս «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 8 և ՀՀ Սահմանադրություն, 176-րդ հոդված 2, 3 մասեր
<http://www.parliament.am/parliament.php?id=constitution#10>, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=117713>

⁶² Տե՛ս ՀՀ դատախազության 2019թ.-ի տարեկան հաղորդում, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ և զինվորական դատախազության գործունեության ոլորտ, հասանելի է http://www.parliament.am/draft_docs/7/K-537.pdf,

⁶³ <https://safesoldiers.am/3363.html>

2.4 Հաշվետվողականություն և թափանցիկություն

Արդյունավետ կառավարումն իրենից ենթադրում է հաշվետվողականության և թափանցիկության բարձր մակարդակ, որի առկայության պարագայում ցանկացած կառույցի դերը հասարակության շրջանում կարժևորվի՝ ամրապնդելով ժողովրդավարական վերահսկողությունը: Սակայն ՀՀ ՊՆ-ի և ԱՀ/ԼՂՀ ՊԲ-ի կառույցների կողմից տարիներ շարունակ խախտվել է այդ սկզբունքների իրականացումը, որի միակ հիմնավորումը եղել է գաղտնիության ռեժիմի պահպանումը՝ ի շահ պետության ամրության: Նմանատիպ մոտեցումը հանգեցրել է բանակում վատ բարքերի արմատավորմանը և դրանց պարբերականությանը: Չնայած վերջին տարիներին բարձրացել է ժողովրդավարական վերահսկողությունը բանակում՝ այն դեռ չի ստացել խորքային բնույթ և չեն ներդրվել պատշաճ լծակներ՝ ժողովրդավարական վերահսկողությունն ամրապնդելու համար: Դրա մասին է վկայում այն, որ դեռևս փորձ է արվում թաքցնել մահվան ելքով հանցագործությունների իրական թիվը և դրդապատճառները՝ որպեսզի չբացահայտվի համակարգային խնդիրների դեմ ուղղված անգործությունը:

3. Ռազմական Օմբուդսմենի իրավասությունների հնարավոր շրջանակը ՀՀ-ում

Հիմք ընդունելով, որ ՀՀ ՁՈւ-ում առկա են բազմաթիվ խնդիրներ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌՕ-ի ինստիտուտը ներդրած պետությունները հասել են զինված ուժերի նկատմամբ արդյունավետ վերահսկողության աստիճանի և ամրապնդել մարդու իրավունքների պաշտպանվածությունը, այս կառույցի ստեղծումը ՀՀ-ում օրհասական պահանջ է:

ՌՕ-ի ինստիտուտի ստեղծումը ՀՀ-ում կնպաստի՝

- ՁՈւ-ի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը,
- Հասարակություն-բանակ կապի ամրապնդմանը և վստահության բարձրացմանը,
- բանակում առկա խնդիրների բացահայտմանը և լուծմանը,
- իրավական գործընթացների և քաղաքականության մշակմանը:

ՌՕ-ի ինստիտուտը պետք է ինստիտուցիոնալ և գործառնական առումով լինի անկախ, ինչպես նաև ունենա այնպիսի լիազորությունների գործիքակազմ, որը թույլ կտա համահունչ արձագանքել ՀՀ ՁՈւ-ի խնդիրներին, մասնավորապես՝ ունենա անարգել մուտքի, սեփական նախաձեռնությամբ քննության իրականացման և հարցաքննության, տեղեկատվության հարցման և ստացման, զինված ուժերի քաղաքականության մշակմանը պարտադիր մասնակցության, հատուկ զեկույցներով հանդես գալու, իրավական դաշտի բարելավման և ստեղծման գործընթացում հատուկ կարծիքի տրամադրման և



առաջարկություններ ներկայացնելու իրավունք: ՌՕ-ը պետք է ունենա համագործակցության հստակ մեխանիզմներ՝ ՄԻՊ-ի, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ դատախազության և այլ մարմինների հետ, որոնք առնչվում են զինծառայողների իրավունքների պաշտպանությանը: Միայն նման իրավասությունների լայն շրջանակի ընձեռումը թույլ կտա կանխել և բարելավել մարդու իրավունքների պաշտպանության վիճակը բանակում, մասնավորապես՝ արմատախիլ անել քրեական ենթամշակույթը բանակից, կանխել կոռուպցիոն դրսևորումները, հայտնաբերել համակարգային խնդիրները, մեթոդաբանական ուղեցույցների և լավագույն փորձի միջոցով վերապատրաստումներ և դասընթացներ անցկացնել սպայական և ժամկետային կազմի համար:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՁՈւ-ը խաղաղասիրական առաքելություն է ներկայացնում այլ երկրներում, իսկ հայ-թուրքական սահմանի պահպանությունը իրականացնում է ՀՀ տեղակայված ռուսական ռազմաբազան, ինչպես նաև ժամկետային զինծառայողների, սպաների, վետերանների և նրանց ընտանիքների խնդիրների բազմազանությունը, որոնք կապված են զինծառայության հետ, ՌՕ-ը պետք է իրավագոր լինի քննելու այլ երկրների քաղաքացիների բողոքները (որոնք կապված են ՀՀ ՁՈւ-ի ծառայողի կողմից հասցրած վնասի), նախկին զինծառայողների, վետերանների, նրանց ընտանիքների կամ հարազատների բողոքներն՝ առանց ժամկետային սահմանափակումների, ինչպես նաև վերահսկողություն իրականացնի սոցիալական և առողջապահական իրավունքների պաշտպանության ապահովման և նախագորակոչային փուլերի նկատմամբ:

Լինելով ժողովրդավարական զարգացման անցումային փուլում, երբ հստակ և ամուր ամրագրված չէ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, ՌՕ-ի ստեղծումը ռազմավարական կարևորագույն նշանակություն ունի ՀՀ-ի համար: Մասնավորապես՝ լինելով պատերազմական վտանգի մեջ գտնվող երկիր՝ զինծառայության և զինված ուժերի քաղաքականությունը պետք է լինի մշտական վերահսկողության ներքո և արտացոլի ժողովրդավարական հիմնարար սկզբունքները:

3.1 ՀՀ-ում ՌՕ-ի ինստիտուտի ձևավորման նախընտրելի մոդելը

ՌՕ-ի առջև դրված առաքելության արդյունավետ իրականացման համար նախևառաջ անհրաժեշտ է, որ օրենսդրորեն սահմանվեն ինստիտուցիոնալ և գործառութային անկախության երաշխիքները՝ համապատասխան միջազգային սկզբունքների, որոնք վերաբերելի են այս մեխանիզմներին (Տես՝ էջ 6): Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածով սահմանվում է, որ «*մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ, որոնց*



լիազորությունները, անկախության երաշխիքները և անդամների ներկայացվող պահանջները սահմանվում են օրենքով»:

Հիմք ընդունելով այս կարգավորումը և սույն փաստաթղթում ներկայացված հիմնավորումներն՝ առաջարկում ենք՝

- 1) Մշակել և ընդունել «Ռազմական օմբուդսմենի մասին» ՀՀ օրենք,
- 2) Ներդնել ՌՕ-ի անկախ ինստիտուցիոնալ կառույց,
- 3) «Ռազմական օմբուդսմենի մասին» ՀՀ օրենքով սահմանել, որ՝
 - 1) ՌՕ-ը ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-րդով՝ 6 տարի ժամկետով,
 - 2) ՌՕ-ի պաշտոնում թեկնածուին առաջադրում է ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովը,
 - 3) ՌՕ-ը ստանում է պատգամավորին իրավահավասար գործառնությանին անձեռնմխելիության երաշխիքներ,
 - 4) Գործի քննությունն իրականացվում է ՌՕ-ի սեփական նախաձեռնությամբ կամ ստացված բողոքների հիման վրա,
 - 5) ՌՕ-ն ունի անարգել մուտքի իրավունք գորամասեր և ազատությունից զրկման վայրեր, իրավունք ունի պահանջելու և ստանալու տեղեկատվություն պետական իրավասու կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, այդ թվում փաստաթղթեր դատարաններից, եթե գործն առնչվում է զինվորական ծառայությանը,
 - 6) ՌՕ-ը, բողոքի քննության շրջանակներում, իրավասու է իրականացնել հարցաքննություն,
 - 7) ՌՕ-ը կարող է ներկա գտնվել դոնբաս և փակ դատական նիստերին, որոնք վերաբերում են զինվորական ծառայությանը,
 - 8) «համազգեստով քաղաքացիներ» հայեցակարգը գործում է որպես սկզբունքային ուղղվածություն՝ համապատասխանեցնելով հարակից օրենքներն այդ հայեցակարգին,
 - 9) ՌՕ-ը կարող է մասնակցել ՊՆ-ի քաղաքականության մշակմանը և ԶՈւ-ին առնչվող օրենսդրական դաշտի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ և հատուկ կարծիք,
 - 10) ՌՕ-ը տարեկան և հատուկ զեկույց է ներկայացնում ԱԺ-ին, որում բացահայտված համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ իրավասու պետական մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնարկել համապատասխան քայլեր՝ այդ թվում որոշումների, օրենսդրական նախաձեռնությունների տեսքով,
 - 11) ՌՕ-ը համագործակցում է այլ մարմինների հետ: ՊՆ-ի թեժ գծին ստացված առերևույթ իրավունքների խախտումների մասին Կենտրոնը տրամադրում է



տեղեկատվություն ՌՕ-ին, իսկ ՄԻՊ-ի գրասենյակ ստացված բողոքի կամ Պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայտնաբերած խախտման դեպքում գործի քննման ենթակայությունը որոշվում է ըստ բողոքի առարկայի՝ այն է՝ ԶՈւ-ի ներկա և նախկին զինծառայողների (կամ նրանց մերձավոր ազգականների) ներկայացրած բողոքները, որոնք վերաբերում են զինվորական ծառայության ընթացքում իրավունքների ենթադրյալ խախտումներին, հասցեագրվում են ՌՕ-ին: